ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2214, Կոտայքի մարզ,գ.Նուռնուս. Գլխավոր փողոց թիվ 15, Հեռախոս 0222 6 84 51, Էլ. փոստ՝ nurnus.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

,,14,, հունվարի 2016 թվականի N 01

## ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Նուռնուս համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 14–ի թիվ 01 հերթական նիստի հետևյալ օրակարգը

1.Նուռնուս համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15– ի թիվ 44-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

2.Նուռնուս համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15– ի թիվ 45-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

3.Նուռնուս համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15– ի թիվ 47 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին :

4.Նուռնուս համայնքի ավագանու 2015 թվականի հերթական նիստերի գումարման օրերի ժամանակացույցը հաստատելու մասին:

**Կողմ (3)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ՄԱՐԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՍՈՍ ԱՎԴԱԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2214, Կոտայքի մարզ,գ.Նուռնուս. Գլխավոր փողոց թիվ 15, Հեռախոս 0222 6 84 51, էլ. փոստ՝ nurnus.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

,,14,, հունվարի 2016 թվականի N 02-Ն

## ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 44-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի դրույթներով, համայնքի ավագանին որոշում է.

1.Նուռնուս համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15-ի «Նուռնուս համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին,, թիվ 44-Ն որոշման հավելվածում կատարել փոփոխություն և այն շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող տասներրորդ օրը:

Կողմ (3) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՄԱՐԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՍՈՍ ԱՎԴԱԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված

ՀՀ Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի ավագանու
2016 թվականի հունվարի 14 ի թիվ 02 Ն որոշման

# ՆՈՒՌՆՈՒՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

/հազար դրամ/

| Հ/ հ | ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ | Սահմանված դրույքաչափը |
|---|---|---|
| 1 | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետա-շինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի , շինությունների /ներառյալ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝<br>Հիմնական օբյեկտների համար<br>1)մինչև 300քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև 200քմ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար . ընդհ. մակ. ունեցող հաս. և արտադր. նշ. օբյեկտների համար | 7500 |
| | 2) սույն կետի «1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝<br>ա.201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 15000 |
| | բ. 501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 25000 |
| | գ. 1001-ից մինչև 3000ք.մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 25000 |
| | դ.3001-ից և ավել քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 50000 |
| | ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝<br>3) մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 1500 |
| | 4) 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 2500 |
| 2 | Համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման , աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ ինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝<br>1)չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում, կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն | 1500 |
| | 2) Բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման , վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից նախատեսվում է նաև կցակառույց ների, վերնակառույցների շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխու թյուն , ապա , բացի սույն կետի « 1 » ենթակետով սահմանված դրույքաչափի կիրառվում է նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը | 2500 |

| | | |
|---|---|---|
| | ՝ օբյեկտի ընդհանուրն մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով | |
| | 3) Նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա / շինարարաություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն թյուն, ապա,այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում է նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը | |
| 3 | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է | 2500 |
| 4 | Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է<br>1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար | 5 000 |
| | 2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | 5 000 |
| 5 | Համայնքի տարածքում՝<br>1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար՝<br>մեկ քառակուսի մետրի համար | 170 |
| | 2) հեղուկ վառելիքի տեխնիկական հեղուկների , հեղուկացված գազերի , մանրածախ առևտրի կետերում , հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների , հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար ընթացիկ տարվա համար | 100 000 |
| | 3) Համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար | - |
| | 4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար<br>ա. հիմնական շինությունների ներսում /յուրաքանչյուր եռամսյակի համար/<br>բ. ոչ հիմնական շինությունների ներսում /յուրաքանչյուր եռամսյակի համար/ | 3000<br>500 |
| | 5)Ավտոկայանատեղի համար | - |
| | 6)Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար | 50 000 |
| | " թանկարժեք մետաղների մասին " Հայաստանի հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար ՝ յուրաքանչյուր տարվա համար | 25000 |
| 6 | Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները / սաունաները / , խաղատները ժամը 24:00 –ից հետո աշխատելու թույլտվության համար՝ ընթացիկ տարվա համար | |
| | 1)առևտրի օբյեկտների համար | 25 000 |
| | 2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար | 50 000 |
| | 3) բաղնիքների / սաունաների/ համար | 200 000 |
| | 4) խաղատների կազմակերպման համար | 500 000 |

| | | |
|---|---|---|
| | 5) շահումով խաղերի կազմակերպման համար | 250 000 |
| | 6) վիճակախաղերի կազմակերպման համար | 75 000 |
| 7 | Յամայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության մեկ քառակուսի մետրի համար | |
| | 1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային % արտադրանք գովազդող | |
| | արտաքին գովազդի համար | 1000 |
| | 2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային %) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար | 1700 |
| | 3) այլ արտաքին գովազդի համար | 700 |
| | 4)դատարկ գովազդային վահանակների համար | 350 |
| 8 | Յամայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար ընթացիկ տարվա համար<br>1) Համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներից<br>2) Համայնքի տնտեսությունների հաշվառման գրքից<br>3) համայնքի հողի և գույքահարկի շտեմարանից/բազայից/ | 5 000<br>500<br>500 |
| 9 | Յամայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների ) ծառայություն իրականացնելու թույլտվության ընթացիկ տարվա համար | 5 000 |
| 10 | Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար<br>ա)3հա-ից մինչև 5հա մակերես ունեցող գերեզմանատների համար | 2 500 000 |
| | ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ | |
| 1 | համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու ու հաստատելու,ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար համայնքի ղեկավարի աշխատակազմի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | 5 000 |
| 2 | համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար համայնքի ղեկավարի աշխատակազմի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ | 5 000 |
| 3 | համայնքի ղեկավարի աշխատակազմի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար՝ | 5 000 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2214, Կոտայքի մարզ,գ.Նուռնուս. Գլխավոր փողոց թիվ 15, Հեռախոս 0222 6 84 51, Էլ. փոստ՝ nurnus.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

,,14,, հունվարի 2016 թվականի N 03-Ն

## ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 45-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Նուռնուս համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15–ի «Նուռնուս գյուղական համայնքի 2016 թվականի տեղական բյուջեն հաստատելու մասին,, թիվ 45-Ն որոշման հավելվածում կատարել փոփոխություն և այն շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (3) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՄԱՐԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՄՆԱՑԱԿԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ
ՍՈՍ ԱՎԴԱԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Նուռնուս
համայնքի ավագանու 2015 թվականի
դեկտեմբերի 15 -ի թիվ 45- Ն որոշման

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Նուռնուս
համայնքի ավագանու 2016 թվականի
հունվարի 14 -ի թիվ 3- Ն որոշման

## *ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ*

## *ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ*

# *2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ*

Նուռնուս համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15- ի N 45- Ն որոշման
և խմբագրված 2016 թվականի հունվարի 14 թիվ 3-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
/համայնքի բյուջեն սպասարկող տեղական գանձապետական բաժանմունքի անվանումը/

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մնացական Գագիկի Գևորգյան
/Անուն, հայրանուն, ազգանուն/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2214, Կոտայքի մարզ,գ.Նուռնուս. Գլխավոր փողոց թիվ 15. Հեռախոս 0222 6 84 51, էլ. փոստ՝ nurnus.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

,,14,, հունվարի 2016 թվականի N 04-Ն

## ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 47 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի և 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ,,բ,, ենթակետի՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Նուռնուս համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15-ի «Նուռնուս գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի նոյեմբերի 11-ի N39,40 և 41 որոշումների մեջ փոփոխություն կատարելու մասին ,, N47 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրից հանել ,,41,, թիվը:

2) ուժը կորցրած ճանաչել որոշման 3-րդ կետը;

3)3112տողի 11 բաժնի 1-ին խմբի 2-րդ դասի (պահուստային միջոցներ)4891 հոդվածում ,,800000,, թիվը փոխարինել ,,60 000,, թվով :

4) 2111 տողի, 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4112 (պարգևատրումներ և դրամական խրախուսանքներ) հոդվածում ,,806 000,, թիվը փոխարինել ,,1 406 000,, թվով:

5) 2111 տողի, 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4111 (աշխատողների աշխատավարձ և հավելավճարներ) հոդվածում ,,10 229 000,, թիվը փոխարինել ,,10 369 000,, թվով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (3) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՄԱՐԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՍՈՍ ԱՎԴԱԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2214, Կոտայքի մարզ,գ.Նուռնուս, Գլխավոր փողոց թիվ 15, Հեռախոս 0222 6 84 51, էլ. փոստ՝ nurnus.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

,,14,, հունվարի 2016 թվականի N 05

### ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է.

1. 2016 թվականի ընթացքում Նուռնուս համայնքի ավագանու հերթական նիստերը գումարել համաձայն հետևյալ ժամանակացույցի

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| | |
|---|---|
| Հունվարի 14 | Հուլիսի 13 |
| Մարտի 14 | Սեպտեմբերի 13 |
| Մայիսի 13 | Նոյեմբերի 11 |

**Կողմ (3)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ՄԱՐԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՍՈՍ ԱՎԴԱԼՅԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ**